ՀՈՒՇԱԹԵՐԹ

Օտարերկրյա քաղաքացիներին՝ ՌԴ Օրենսգրքով սահմանված պահանջները չկատարելու համար պատասխանատվության ենթարկվելու մասին (այսուհետ Հուշաթերթ)

ՀԱՐԳԵԼԻ ՀՅՈՒՐ,

Մենք ուրախ ենք, որ Խանտի-Մանսիական ինքնավար օկրուգի բազմաթիվ հրաշալի քաղաքներից Դուք որոշել եք այցելել բազմաէթնիկ քաղաքներից մեկը՝ Նեֆտեյուգանսկը: Նեֆտեյուգանսկն է դարձել հարազատ տուն 93 ազգի ներկայացուցիչների և օտարերկրյա ավելի քան 10 000 քաղաքացիների համար, որոնք հաշտ ու համերաշխ ապրում և աշխատում են՝ ի շահ մեր քաղաքի: Խաղաղության և տարբեր ազգերի միջև փոխըմբռնման պահպանումը կնպաստի, որպեսզի Նեֆտեյուգանսկը երկար տարիներ մնա ամենագրավիչ քաղաքներից մեկը:

Ծանոթացեք մեր Հուշաթերթին, որը Ձեզ կներկայացնի ՌԴ Օրենսդրության հիմնական նորմերը, համաձայն որոնց անձը ենթարկվում է պատասխանատվության՝ ծայրահեղական բնույթի գործունեություն իրականացնելու, միջազգային և միջկրոնական պառակտում սերմանելու, ինչպես նաև վարձկանությանն ու ահաբեկչական գործունեությանն աջակցելու համար:

Մի՛ խախտեք ՌԴ Օրենսդրությունը, և հարգե՛ք տեղի սովորույթները:

Ցանկանում ենք հաճելի ժամանց Խանտի-Մանսիական ինքնավար օկրուգի Նեֆտեյուգանսկ քաղաքում:

Ուշադրություն

Ռուսաստանի Դաշնության գործող Քրեական Օրենսգրքի համաձայն (այսուհետ ՌԴ ՔՕ)՝

- **<u>Գործողությունները</u>, որոնք ուղղված են ատելություն կամ թշնամանք սերմանելուն, անհատի կամ մի խումբ մարդկանց արժանապատվության ստորացմանը՝ հիմք ընդունելով սեռը, ռասայական և ազգային պատկանելությունը, լեզուն, ծագումն ու կրոնական հայացքները** (նման գործողություն կատարողը հանդիսանում է որևէ հասարակական

խմբակցության անդամ) և կատարվում են հասարակայնորեն, ինչպես նաև ԶԼՄ-ների և տեղեկատվական-հեռահաղորդակցման առցանց կապի օգնությամբ, որոնց թվում է նաև «Համացանցը», 1 տարվա ընթացքում հանցանք կատարողը ենթարկվում է վարչական պատասխանատվության,որից հետո նման գործողությունները **պատժվում են տուգանքով՝ 300 000-500 000 ռուբլու չափով, կամ պատժվողի աշխատավարձի չափով կամ նրա՝ վերջին 2-3 տարվա ընթացքում ունեցած այլ եկամուտի չափով կամ կիրառվում է հարկադիր աշխատանք՝ 1-4 տարի ժամկետով** ՝ զրկելով հանցանք կատարած անձին որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից՝ **մինչև 3 տարի ժամկետով,** կամ վերջինիս **սպառնում է ազատազրկում՝ 2-5 տարի ժամկետով** (ՌԴ ՔՕ հոդված 282, մաս 1):

• **Գործողությունները, որոնք ուղղված են ատելություն կամ թշնամանք սերմանելուն, անհատի կամ մի խումբ մարդկանց արժանապատվության ստորացմանը՝ հիմք ընդունելով սեռը, ռասայական և ազգային պատկանելությունը, լեզուն, ծագումն ու կրոնական հայացքները (նման գործողություն կատարողը հանդիսանում է որևէ հասարակական խմբակցության անդամ)** և կատարվում են հասարակայնորեն, ինչպես նաև ԶԼՄ-ների և տեղեկատվական-հեռահաղորդակցման առցանց կապի օգնությամբ, որոնց թվում է նաև «Համացանցը», և որոնց իրականացման ժամանակ տեղի է ունեցել՝

ա) բռնության կիրառում կամ վերջինիս սպառնալիք

բ) դիրքի չարաշահում

գ) կազմակերպված հանցավոր խմբի մասնակցություն

պատժվում են տուգանքով՝ 300 000-600 000 ռուբլու չափով, պատժվողի աշխատավարձի չափով կամ նրա՝ վերջին 2-3 տարվա ընթացքում ունեցած այլ եկամուտի չափով, կամ դատապարտվում հարկադիր աշխատանք՝ 2-5 տարի ժամկետով ՝ զրկելով հանցանք կատարած անձին որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից՝ **մինչև 3 տարի ժամկետով, կամ ազատազրկելով 3-6 տարի ժամկետով** (ՌԴ ՔՕ հոդված 282, մաս 2):

• **Ծայրահեղական խմբավորման ստեղծումը,** այսինքն անհատների կազմակերպված խմբի ստեղծում ծայրահեղական բնույթի հանցանքներ կատարելու կամ դրանց նախապատրաստելու համար,որը նույնն է, ինչ նման խմբավորումը, նրա մասը կամ կառուցվածքային ստորաբաժանումները

ղեկավարելը, **ինչպես նաև կազմակերպիչների,** ղեկավարների և կառուցվածքային ստորաբաժանումների այլ ներկայացուցիչների **միավորման ստեղծումը**, որպեսզի ծայրահեղական բնույթի հանցանքներ կատարելու համար մշակվեն պլաններ և ստեղծվեն համապատասխան պայմաններ, **պատժվում է տուգանքով՝ 400 000-800 000 ռուբլու չափով, կամ պատժվողի աշխատավարձի չափով կամ նրա՝ վերջին 2-4 տարվա ընթացքում ունեցած այլ եկամուտի չափով կամ դատապարտվում ազատազրկման՝ 6-10 տարի ժամկետով՝** զրկելով հանցանք կատարած անձին որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից՝ **մինչև 10 տարի ժամկետով՝ սահմանափակելով վերջինիս ազատությունը 1-2 տարով** (ՌԴ ՔՕ հոդված 282.1

մաս 1):

- **Ներգրավելը,հավաքագրելը, կամ այլ ձևով անձանց ընդգրկելը ծայրահեղական խմբակցության գործունեության մեջ պատժվում է տուգանքով՝ 300 000-700 000 ռուբլու չափով կամ պատժվողի աշխատավարձի չափով կամ նրա՝ վերջին 2-4 տարվա ընթացքում ունեցած այլ եկամուտի չափով, կամ դատապարտվում հարկադիր աշխատանքի 2-5 տարի՝** զրկելով պատժվողին որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից **մինչև 5 տարի, կամ առանց դրա, և, սահմանափակելով ազատությունը 1-2 տարով, կամ դատապարտվում է ազատազրկման 4-8 տարի ժամկետով՝ սահմանափակելով ազատությունը՝ 1-2 տարի ժամկետով** (ՌԴ ՔՕ հոդված 282.1 մաս 1.1):

- **Մասնակցությունը ծայրահեղական խմբակցությունների գործունեությանը պատժվում է տուգանքով՝ 300 000-600 000 ռուբլու չափով կամ աշխատավարձի չափով կամ պատժվողի՝ վերջին 2-3 տարվա ընթացքում ունեցած այլ եկամուտի չափով, կամ դատապարտվում հարկադիր աշխատանքի՝ 1-4 տարի ժամկետով** ՝ հանցանք կատարած անձին զրկելով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից **մինչև 3 տարի, կամ առանց դրա և սահմանափակելով ազատությունը մինչև 1 տարի ժամկետով, կամ դատապարտվում ազատազրկման՝ 2-6 տարի ժամկետով՝** զրկելով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից **մինչև 5 տարի ժամկետով, կամ առանց դրա և սահմանափակելով ազատությունը մինչև 1 տարի ժամկետով**

(ՌԴ ՔՕ հոդված 282.1 մաս 2)

• **Հասարակական կամ կրոնական միավորման, կամ այլ կազմակերպության գործունեության իրականացումը,** որոնց նկատմամբ դատական կարգով ընդունվել և օրինական ուժի մեջ է մտել ծայրահեղական գործունեություն իրականացնելու նպատակով ծավալվող գործողությունները դադարեցնելու կամ արգելելու մասին որոշում՝ բացառությամբ այն կազմակերպության, որը, համաձայն ՌԴ Օրենսդրության, ճանաչվել է ահաբեկչական, **պատժվում է տուգանքով՝ 400 000-800 000 ռուբլու չափով կամ պատժվողի աշխատավարձի չափով կամ նրա՝ վերջին 2-4 տարվա ընթացքում ունեցած այլ եկամուտների չափով, կամ դատապարտվում ազատազրկման՝ 6-10 տարի ժամկետով՝** հանցանք կատարած անձին զրկելով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից **մինչև 10 տարի և սահմանափակելով ազատությունը 1-2 տարի ժամկետով** (ՌԴ ՔՕ հոդված 282.2 մաս 1):

• **Ներգրավելը, հավաքագրելը, կամ այլ ձևով անձանց ընդգրկելը** ծայրահեղական կազմակերպության գործունեության մեջ **պատժվում է տուգանքով՝ 300 000-700 000 ռուբլու չափով կամ պատժվողի աշխատավարձի չափով կամ նրա՝ վերջին 2-4 տարվա ընթացքում ունեցած այլ եկամուտի չափով, կամ դատապարտվում հարկադիր աշխատանքի 2-5 տարի՝** զրկելով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից **մինչև 5 տարի, կամ առանց դրա և սահմանափակելով ազատությունը 1-2 տարով կամ դատապարտվում է ազատազրկման 4-8 տարի ժամկետով՝ սահմանափակելով ազատությունը 1-2 տարի ժամկետով** (ՌԴ ՔՕ հոդված 282.2 մաս 1.1):

• **Մասնակցությունը հասարակական կամ կրոնական միավորման, կամ այլ կազմակերպության գործունեությանը,** որոնց նկատմամբ դատական կարգով ընդունվել և օրինական ուժի մեջ է մտել ծայրահեղական գործունեություն իրականացնելու նպատակով ծավալվող գործողությունները դադարեցնելու կամ արգելելու մասին որոշում՝ բացառությամբ այն կազմակերպության, որը, համաձայն ՌԴ Օրենսդրության, ճանաչվել է ահաբեկչական, **պատժվում է տուգանքով՝ 300 000-600 000 ռուբլու չափով կամ պատժվողի աշխատավարձի չափով կամ նրա՝ վերջին 2-3 տարվա ընթացքում ունեցած այլ եկամուտների չափով, կամ դատապարտվում հարկադիր աշխատանքի՝ 1-4 տարի ժամկետով՝ 3 տարով զրկելով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեություն ծավալելու իրավունքից, կամ առանց դրա, և սահմանափակելով ազատությունը մինչև 1տարի ժամկետով**

կամ դատապարտվում ազատազրկման 2-6 տարի ժամկետով՝ զրկելով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեություն ծավալելու իրավունքից **մինչև 5 տարի ժամկետով կամ առանց դրա, և սահմանափակելով ազատությունը մինչև 1 տարի ժամկետով** (ՌԴ ՔՕ հոդված 282.2 մաս 2):

• **Կազմակերպություններին ակնհայտորեն ֆինանսավորելու նպատակով միջոցներ հավաքելը, տրամադրելը կամ ֆինանսական ծառայություններ մատուցելը, թեկուզև 1 ծայրահեղական բնույթի հանցագործության նախապատրաստումը և իրականացումը** կամ ծայրահեղական խմբավորման կամ ծայրահեղական կազմակերպության գործունեության ապահովումը **պատժվում է տուգանքով՝ 300 000-700 000 ռուբլու չափով կամ պատժվողի աշխատավարձի չափով կամ նրա՝ վերջին 2-4 տարվա ընթացքում ունեցած այլ եկամուտների չափով, կամ դատապարտվում հարկադիր աշխատանքի՝ 1-4 տարի ժամկետով՝** զրկելով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեություն ծավալելու իրավունքից **մինչև 3 տարի, կամ առանց դրա և սահմանափակելով ազատությունը մինչև 1տարի ժամկետով կամ դատապարտվում ազատազրկման՝ 3-8 տարի ժամկետով** (ՌԴ ՔՕ հոդված 282.3 մաս 1):

• **Ահաբեկչական գործողությունների իրականացումը՝** պայթյունի, հրկիզման կամ այլ գործողությունների կազմակերպումը, որն ուղղված է բնակչությանն ահաբեկելուն, մարդկանց կյանքին և առողջությանը, ինչպես նաև զգալի գույքային վնասներ հասցնելուն, մարդկային զոհեր պատճառելուն, կամ հանգեցնում այլ լուրջ հետևանքների; գործողություններ, որոնք կատարվում են պետական մարմինների կամ միջազգային կազմակերպությունների գործունեությունը ապակայունացնելու կամ նրանց որոշման ընդունման վրա ներգործելու նպատակով, ինչպես նաև վերը նշված բոլոր գործողությունների իրական սպառնալիքի տարածումը նույն նպատակով; ահաբեկչական բնույթի հանցագործության իրականացումը ատոմային էներգիա օգտագործող օբյեկտներում, միջուկային պայթուցիկ տարրերի, ռադիոակտիվ նյութերի, ռադիոակտիվ ճառագայթման աղբյուրների կամ թունավորող, ուժեղ ներգործող նյութերի, վտանգավոր քիմիական, կենսաբանական նյութերի կիրառմամբ, **դատապարտվում է ազատազրկման՝ 10-20 տարի ժամկետով կամ ցմահ բանտարկության** (ՌԴ ՔՕ հոդված 205):

• **Ահաբեկչական գործունեությանն օժանդակելը** (աջակցելը)՝ ներգրավելը, հավաքագրելը կամ այլ ձևով անձին ներքաշելը (խորհուրդներով,

ցուցումներով, տեղեկատվություն,միջոցներ կամ գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, հանցագործին, ինչպես նաև հանցանքի միջոցները, գործիքները, հետքերը կամ առարկաները պարտակել խոստանալով) ահաբեկչական գործունեության մեջ, որպեսզի մասնակից դարձնեն ահաբեկչության հրապարակային կոչերին, հանցանքի կատարումը հրապարակայնորեն արդարացնելուն, ահաբեկչություն քարոզելուն, պատանդ վերցնելուն, անօրինական զինված հանցավոր խմբակցության կազմակերպմանը, ինչպես նաև դրա կողմից իրականացվող գործողություններին, երկաթգծի շարժական կազմի,նավի և օդանավի զավթմանը, վերը նշված հանցանքներից գոնե մեկն իրականացնելու նպատակով անձանց զինելն ու նախապատրաստելը, ինչպես նաև ահաբեկչությունը ֆինանսավորելը **պատժվում են** ազատազրկմամբ՝ 8-20 տարի ժամկետով և պատժվում տուգանքով՝ մինչև 1 մլն. ռուբլու չափով կամ ցմահ բանտարկության կամ դատապարտվում ցմահ ազատազրկման (ՌԴ ՔՕ հոդված 205.1.):

• **Ահաբեկչական գործունեությանն ուղղված հրապարակային կոչերը, ահաբեկչությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը** (գործունեություն՝ ուղղված նյութերի և տեղեկատվության տարածմանը՝ ահաբեկչության գաղափարախոսությունը ձևավորելու նպատակով), այդ թվում նաև ԶԼՄ-ների և համացանցի օգնությամբ, **պատժվում են տուգանքով մինչև 1 մլն. ռուբլի կամ դատապարտվում ազատազրկման՝ 2-7 տարի ժամկետով** (ՌԴ ՔՕ հոդված 205.2):

• **Ահաբեկչական գործունեություն իրականացնելու նպատակով ահաբեկիչների ուսուցանումը**՝ գիտելիքներ, պրակտիկ կարողություններ և հմտություններ ձեռք բերելը ֆիզիկական և հոգեբանական նախապատրաստման ժամանակ, հանցանքի միջոցների, զենքի, պայթուցիկ սարքավորումների,պայթուցիկների,թունավոր նյութերի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող այլ նյութերի և

առարկաների հետ վարվելու կանոնները սովորելիս, **պատժվում է ազատազրկմամբ՝ 15-20 տարի ժամկետով կամ դատապարտվում ցմահ ազատազրկման** (ՌԴ ՔՕ հոդված 205.3):

• **Ահաբեկչական խմբավորումների կազմակերպումը** (ահաբեկչական գործունեություն իրականացնելու նպատակով նախօրոք միավորված անձանց խումբ), ինչպես նաև մասնակցությունը նման խմբավորումների կողմից իրականացվող գործողություններին, **պատժվում է ազատազրկմամբ՝ 5-20**

տարի ժամկետով և տուգանքով՝ մինչև 1 մլն. ռուբլի կամ ցմահ ազատազրկմամբ (ՌԴ ՔՕ հոդված 205.4):

• **Ահաբեկչական կազմավորման գործունեության կազմակերպումը, ինչպես նաև մասնակցությունը նման խմբավորումների կողմից իրականացվող գործողություններին՝** կազմակերպության նպատակներն ու խնդիրները, դրանց իրականացման ու կատարման կարգը որոշելը, կատարման վերահսկողությունը, կազմակերպության անդամների միջև դերերի բաշխումը,կազմակերպության գործունեության մեջ նոր անդամների ընգրկումը,նյութական ապահովվածությունը,պլանավորումը, գործունեության ընթացիկ հարցերի լուծումը,ժողովների հրավիրումը,նոր անդամների հավաքագրման և երթերի կազմակերպումը, բանկային հաշիվներից օգտվելը, յուրահատուկ գրականության տարածումը և կազմակերպության գաղափարների տարածման այլ միջոցների օգտագործումը, ինչպես նաև տվյալ կազմակերպության գործունեության մեջ նորանոր անձանց ներքաշելը, **պատժվում է ազատազրկմամբ՝ 10-20 տարի ժամկետով և տուգանքով մինչև 1 մլն. ռուբլի կամ ցմահ ազատազրկմամբ** (ՌԴ ՔՕ հոդված 205.5):

• Պետական մարմիններին **ահաբեկչական բնույթի հանցագործության մասին չհայտնելը պատժվում է տուգանքով՝ առավելագույնը 100.000 ռուբլու չափով, կամ կիրառվում է հարկադիր աշխատանք՝ մինչև 1 տարի ժամկետով կամ ազատազրկմամբ առավելագույնը 1 տարի ժամկետով** (ՌԴ ՔՕ հոդված 205.6):

• **Անձանց պատանդ վերցնելը կամ պահելը՝** կիրառելով բռնություն, զենք, այդ թվում կանանց, երեխաների, 2 և ավելի անձանց նկատմամբ, որի նպատակն է ստիպել պետությանը, կազմակերպությանը կամ քաղաքացուն կատարել կամ չկատարել որևիցե գործողություն (վերջինս հանդիսանում է պատանդին ազատ արձակման պայման) **պատժվում է ազատազրկմամբ՝ 5-20 տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ** (ՌԴ ՔՕ հոդված 206):

• **Ակնհայտ կեղծ տեղեկատվությունը ահաբեկչության մասին՝** ենթադրյալ պայթյունի, հրկիզման կամ այլ գործողությունների մասին, որոնք կարող են պատճառել զգալի գույքային վնասներ, մարդկային զոհեր կամ ստեղծել այդպիսի վտանգ, կամ ունենալ այլ հասարակական վտանգավոր հետևանքներ, **պատժվում է տուգանքով՝ առավելագույնը 2 մլն ռուբլու չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 10 տարի ժամկետով** (ՌԴ ՔՕ հոդված 207):

· **Զինված կազմավորման ստեղծումը**, որը նախատեսված չէ դաշնային օրենսդրությամբ, պատժվում է ազատազրկմամբ՝ 10-20 տարի ժամկետով (հոդված ՌԴ ՔՕ հոդված 208 մաս 1): **Մասնակցությունը նման կազմավորման գործունեությանը, ինչպես նաև մասնակցությունը նման կազմավորման գործունեությանը օտարերկյա պետության տարածքում**, որը նախատեսված չէ տվյալ պետության օրենսդրությամբ, Ռուսաստանի Դաշնության շահերին հակասելու դեպքում **պատժվում է ազատազրկմամբ՝ `8-15 տարի ժամկետով** (ՌԴ ՔՕ հոդված 208 մաս 2):

· **Պայթուցիկ նյութերի անօրինական պատրաստումը**, պայթուցիկ սարքերի անօրինական պատրաստումը, վերափոխումը, կամ վերանորոգումը **պատժվում է ազատազրկմամբ՝ 3-12 տարի ժամկետով և տուգանքով՝ մինչև 500 000 ռուբլու չափով** (ՌԴ ՔՕ հոդված 223.1):

· **Վարձկանությունը՝** վարձկանների հավաքագրումը, ուսուցանումը, ֆինանսավորումը կամ նրանց այլ նյութական օժանդականություն ցուցաբերելը, ինչն էլ ենթադրում է վարձկաններին զինված հակամարտություններում կամ ռազմական գործողություններում օգտագործելը, **պատժվում է ազատազրկմամբ՝ 4-15 տարի ժամկետով և տուգանքով՝ մինչև 500 000 ռուբլու չափով** (ՌԴ ՔՕ հոդված 359):

«Ռուսաստանի բազմազգ ժողովրդի միջազգային խաղաղությունը, համերաշխությունը, մշակութային միասնությունը, ավանդույթների հարգումը և հայրենասիրությունը մեր պետականության առանցքային հիմնաքարն է»:

Խանտի-Մանսիական ինքնավար օկրուգի

նահանգապետ Նատալյա Կոմարովա

Բարի գալուստ Նեֆտեյուգանսկ

Текст данного документа с русского языка
на армянский язык перевел переводчик
Давронова Дарья Исмаиловна

Российская Федерация

Город Сургут Ханты-Мансийского автономного округа-Югры Тюменской области

Двадцать седьмого апреля две тысячи двадцатого года

Я, Аристова Татьяна Владимировна, нотариус нотариального округа город Сургут Ханты-Мансийского автономного округа-Югры Тюменской области, свидетельствую подлинность подписи переводчика Давроновой Дарьи Исмаиловны.

Подпись сделана в моем присутствии.

Личность подписавшего документ установлена.

Зарегистрировано в реестре: **№ 86/2-н/86-2020-7-215**.

Взыскано государственной пошлины (по тарифу): 100 руб. 00 коп.

Уплачено за оказание услуг правового и технического характера: 500 руб. 00 коп.

Т.В.Аристова

Всего пронумеровано, прошнуровано и скреплено печатью 2 листов

Нотариус